

անգամ գտնելու պատիւը պատկանում է անմոռանալի Գաբրի, արքեպիսկոպոս Այվազեանին և կարծում ենք որ յաջողեցինք այդ ապացուցանել: Բայց սորանով ամենևին չէ փոքրանում յարգելի Միաբանի աշխատութիւնը, որին յամենայն դէպս աւելի պարտական ենք մնում քան թէ Գաբրիէլ սրբազանին, որովհետև միմիայն յարգելի Միաբանի շնորհիւն է որ այսօր ամենքս միջոց ենք ստանում կարգալ և ծանօթանալ յիշեալ ծածկագրերի հետաքրքրական բովանդակութեան հետ: Եթէ յարգելի Միաբանը աշխատած և հրատարակած չլինէր այդ բանալին, այն ժամանակ ծածկագիր նամակները նոյնպէս ծածուկ ու մեռած կլինէին մեզ համար, ինչպէս որ մնացել էին մինչև այսօր, չնայելով նոյն իսկ Գաբրի սրբազանի առաջին գիւտին:

Տալով ուրեմն « զկայսերն - կայսեր և զԱստուծոյն - Աստուծոյ », մեզ մնում է միայն ցանկալ որ բոլոր այդ ծածկագրերը ազատուին կորստից և լոյս աշխարհ գալով նոր լոյս սփռեն մեր պատմութեան ամենահետաքրքրական և միևնոյն ժամանակ ամենանշանաւոր շրջաններից մէկի վերայ:

Թ. ԶԱՔԱՐԵԱՆ

Ս. Պետերբուրգ. 1888 փետր. 29:

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ. Ամբողջովին և առանց փոփոխութեան տպելով Պ. Զաքարեանցի նամակը մենք աւելի ևս համոզուում ենք, որ հանգուցեալ Այվազեան զբաղուելով 20 տարի շարունակ (1859—1880) այն ծածկագրերով, որ մենք առաջին անգամ անուանեցինք Ներսիսեան, չկարողացաւ վերծանել նորանց կամ ինչպէս սովորական է ասել, չգտաւ նոցա բանալին: Պ. Զաքարեան ապացուցութեան անկարօտ է համարում Հանգ. Այվազեանի գիւտը: Մենք ընդունում ենք նաև որ ինքն էլ՝ Հանգ. Այվազեան Սրբազանը, կարող էր համոզուած լինել որ գտած է այդ ծածկագրերի բանալին, բայց այդ բաւարար փաստ չէ գիտութեան առաջ, մանաւանդ որ այդ գիւտի մասին պատմուածները ոչ թէ միմեանց հաստատող, այլ հակասող և հերքող են: Դժուար չէ ինձ ենթադրել որ՝ որ և է մէկը, այն էլ Հ. Այվազեանի նման անձնաւորութիւնը, գտած լինէր ինձնից առաջ նոյնը, ինչ որ ես թէ և ուշ ժամանակաւ, բայց բոլորովին անկախ և նոյն իսկ անտեղեակ առաջին գիւտին: արել եմ և դրական ապացոյցով մատուցել ընթերցող հասարակութեան: Սակայն ինձ թուում է թէ, նախապէս պէտք է դրական փաստերով հաւաստիանալ Հանգուցեալի ենթադրեալ գիւտին և ապա թէ անցնել այն մասին խօսելու թէ ես արդեօք կարող էի

օգտուած լինել որ և է չափով կամ կերպով արդէն եղած գիւտից:

Պ. Զաքարեանցի պատմածը իմ կարծիքով բոլորովին նոյնն է ինչ որ Պ. Զարմայր Մսերեանց շատ տարիներ առաջ արդէն հրատարակել էր մի ծանօթութեամբ, իւր հօր «Էջմիածնի կաթողիկոսաց պատմութեան» մէջ: Ահա այդ հատուածը:

«Լուեալ էի յաւանդութենէ, զի մինչդեռ Դանիէլ Կաթողիկոս ի Մարաղա էր, և Դաւիթ բռնացեալ յԷջմիածին նեղէր զմիաբանս, և սակայն Դանիէլ առնէին զԹղթակցութիւն ընդ միմեանս 1, և մանաւանդ ընդ Ներսիսի վարդապետի, գալտնածածուկ իմն և նորահնար նշանագրովք: ԱՐԴ ՏԵՂԵԿԱՑԱՅ Ի ՀԱԻԱՍՏԻ ԱՂԲԵՐԷ 2, զի այնպիսի ծածկագրութիւնք մինչև յայժմ գտանին ի գրուածսն մնացեալս ի Ներսիսէ Կաթողիկոսէ՝ անընթեռնի համարեալք, ուստի և անծանօթք հասարակաց: Սակայն յամին 1859, ի գնալ Գեր. Գաբրիէլի վարդապետի Այվազեան (այժմ Արքեպիսկոպոս) ի սուրբ Էջմիածին պրօկուրօրն և ատենադպիր Սինօզին մատուցին առ նա ի գրուածոց անտի զԹերթիկ մի, և հարցանէին թէ արդեօք յինչ լեզու և որպիսի տառիւք իցեն գրեալքն. իսկ նորա հայեցեալ ի տարօրինակ ձևակերպութիւնս տառիցն այնոցիկ, և յետ բազումն աշխատ լինելոյ չկարացեալ առ ժամն գտանել զբանալի կամ զայբուբենս ծածկագրութեանն այնորիկ, հաւանութեամբ նոցին առեալ տանի զԹերթին ընդ իւր, զի թերևս յայլում ժամանակի գտցէ ինչ հնարս վերծանելոյ զգրեալսն: Յետ ամաց երէց ի վերայ անցանելոյ, միւրեւ յառաջ միւս յաւանդեալ զԷջմիածնի գրաւոր Թղթակին այնմիկ, և իբր ժամ մի հետազօտ եղեալ պէսպէս հնարիւք և յեղանակօք, յաջողի ուր ուրեմն գտանել զնշանակութիւնս միոյ միոյ ի նշանագրաց անտի, ընթեռնու զԹերթիկն, և պարզագրէ, և էր այն անստորագիր նամակ միոյ ուրուք ի մերձակայիցն Դանիէլի առ Ներսէս վարդապետ այսպիսի ունելով զվերնագիր դրոշմեալ նոյն անծանօթ տառիւք.

1 Կարող էր պատահել որ Դանիէլը ծածկագրել չիմանար:

2 Ցանկալի և անհրաժեշտ է որ Արգոյ Զ. Մսերեան բացատրէր այդ հաւաստի աղբիւրը, որով կլուսաբանուէր այս հարցը:

Ներսէս վարդապետ հոգևոյս հատոր: Յանկալի է ապաքէն զի և մնացեալ թերթք այնպիսիք ոչ միայն անկորուստ պահեսցին, այլ և առաջարկեսցին նմին իսկ Գաբրիէլի Սրբազան Արքեպիսկոպոսի ի պարզագրել. զի չիք երկբայուլթիւն՝ թէ ոչ սակաւ լոյս ծագեսցի ի նոցանէ որոց կամիցինն աշխատասիրել ըզճշգրիտ պատմութիւն ժամանակացն այնոցիկ,» Զարմայր Մսերեանց:

Աւրեմն Հանգ. Այվազեան ծանօթացել է ծածկագրերին 1859 թուին և ոչ Պ. Զաքարեանցի ասած՝ 1866-ին: Դոցա բանալին գտել է կամ ենթագրել է գոած լինել երեք տարի յետոյ, ճիշտ այնպէս և միևնոյն հանգամանքներում, ինչպէս պատմում է Պ. Զաքարեանց, 1862-ին և ոչ թէ 1868-69 թուականին: Երկու բառով հերքել այս բոլորը ասելով թէ 1862 թուականը կամ վրիպակ է կամ թիւրիմացութիւն, ինչպէս անում է Պ. Զաքարեան, առ նուազն հիմնաւոր չէ, և չէ համապատասխանում գիտնական հետազոտութեան պահանջներին:

Մենք մի ուրիշ փաստ էլ ունինք, որով ապացուցւում է թէ Հ. Այվազեան կարող էր առաջին անգամ այդ ծածկագրերը տեսնել 1859-ին, իւր էջմիածնում եղած ժամանակ, Մաթիէոս Կաթողիկոսի օրով:

Հենց այդ ժամանակումն է, որ այժմ գոյութիւն ունեցող ծածկագրեալ թերթիկները, ինչպէս նաև իմ վերծանած երկու նամակը—անցում են մասնաւոր անձանց ձեռքը, ազատուելով ակնբեկ կորստից, որի մասին և յիշում է Պ. Երիցեան, իւր «Նիւթեր Ներսիսի կենսագր.» ժողովածուի (1877 թիֆլիս) 4-դ երեսի առաջին երեք տողում:

Աւրեմն Հ. Այվազեան 1859-թուից ունէր մի օրինակ ծածկագրեալ նամակ և պարզագրել, վերծանել էր նորան, իմացել էր պարունակութիւնը, յայտնել էր մինչև անգամ թէ ինչ բառերով են սկսուում, որից էր գրուած և ում, և ին և ին: Եւ ահա 1866-ին նորից գալով էջմիածին (արդէն երկրորդ թէ երրորդ անգամն էր որ նա գալիս էր եպիսկոպոսանալու) ստանում է մատենադարանապետից 10 օրինակ ծածկագրեալ թերթ, բայց չէ կարողանում վերծանել և հետը տանում է Թէոդոսիա, երեք տարի էլ պահում է, արդէն արած գիւտը նորից անելու համար: Եթէ ճշմարիտ է Պ. Զաքարեանցի սլատ-

մածր, որ հանգուցեալ Ա. յվազեանի բերանիցն է լսել, ուրեմն սխալ է Պ. Զարմայրի հաւաստածը, որ սակայն «հաւաստի աղբիւրից» է քաղած, թերեւս նոյն իսկ Հանգ. Ա. յվազեանի նամակից: Պ. Զ. Մսերեանցին է մնում այս կէտը բացատրել: Եթէ Պ. Զ. Մսերեանցի ասածն է ճշմարիտ, այն ժամանակ գլխովին հերքում է Պ. Զաքարեանցի պատմածը և Հ. Ա. յվազեան հէնց 1866-ին էջմիածնում պիտի կարողանար վերծանել յիշեալ 10 օրինակ ծածկագիրը:

Իմ վերծանած երկու օրինակն էլ տեսաւ Հ. Ա. յվազեան 1866-ին և յետոյ էլ շատ դէպքեր ունեցաւ նոյնը տեսնելու, 1874-ին գալով էջմիածին իբրև աեսուէջ նորաբաց ճեմարանին, մինչև 1876 թիւը իւր թէմումն ունենալով իբրև յաջորդ Ա. խալցիսայում Գեր. Թադէոս Սրբ. Զիւնականին: 1876-ին վերջինս տեղափոխւում է Շամախու թէմը, բայց եօթանասնական թուերի վերջում (1878 կամ 1879-ին) նորից հիւր է գալիս Թիֆլիս Սրբ. Ա. յվազեանին և նորա հետ միասին խնդրում Ստարասելսկուց Շամախու աղջկանց դպրոցի շինութեան հոգը և ստանում:

Այս դրական փաստերը իրաւունք են տալիս կասկածելու այն բանին, ինչ որ Պ. Զաքարեան իւր նամակում իբրև ակսիումա, անկարօտ ապացուցուցութեան հիմնակէտ է ընդունում իրեն և որի վրայ յենուելով անցնում է աւելի հեռաւոր ենթադրութեանց:

Կան և ուրիշ փաստեր, որոնք կասկածելի են կացուցանում Հանգ. Ա. յվազեանի գիւտը: Տարօրինակ է թւում մեզ, որ Սրբազանը սկսեալ 62-թուից յայտնում է սորան նորան իւր գիւտի մասին, սակայն ոչ մի տեղեկութիւն չէ տալիս ոչ կաթողիկոսարանին, ոչ գրադարանապետին, որից պաշտօնապէս յանձնուած էին իրեն մի կամ տասն և մի օրինակ ծածկագրերը: Զէ՞ որ հանգուցեալը եթէ վերծանել էր, պարտական էր թէ ծածկագրերի բնագիրը և թէ վերծանեալ օրինակները վերագարձնել ըստ պատկանելոյն: Ի՞նչպէս է պատահում, որ նա լինելով ճեմարանում տեսուէջ, ամեն օր գտնուելով վեհարանում և միաբանից շրջանում, յայտնում է իւր գիւտը մինչև իսկ 10—14 տարեկան աշակերտներին, և զանց է առնում նոյնն անել, եթէ ոչ իբրև պաշտօնական պարտք, այլ

գտնէ իրրեւ հետաքրքրական մի բան, թէ Կաթուղիկոսի առաջ, թէ Սինօդում, թէ գրադարանապետին և չն:

Երջանկայիշատակ Գէորգ Գ-ի շրջապատող անձնաւորութիւնները, փառք Աստուծոյ, բոլորն էլ կենդանի են: Գրադարանապետ Ներսէս Սրբազանը շարունակուով է իւր պաշտօնավարութիւնը, միւս բոլոր Սրբազաններն ու վարդապետները կան դեռ ևս, որոնք վաթսուներկան թուականներից մինչև օրս էլ մշտապէս եղել են էջմիածնում և գործի գլուխ կանգնած, սակայն չգիտեն Հ. Այվազեանի գիւտի մասին, և հաւաստում են որ նա ոչինչ չէ ներկայացրել, ոչ վեհարան, ոչ սինօդ, ոչ գրադարան և ոչ իսկ մասնաւորապէս իրենցից մէկին:

Այս հարկաւ չէ նշանակում, թէ՛ ես պահանջելիս լինէի որ Հ. Այվազեան այդ թղթերը գրպանում դրած տնէ տուն մասն ածէր և սորան նորան ցոյց տար, ինչպէս ճարտասանօրէն պատասխանում է մեզ Պ. Զաքարեանց:

Եթէ ապացուցուի որ Հ. Այվազեան իսկապէս գտել է Ներ. Ծածկագրերի բանալին, այն ժամանակ մենք իրաւունք կունենանք ասելու, որ նա իւր արած գիւտը «տնէ տուն» շրջեցրել է յայտնելով սորան նորան, բայց չէ ներկայացրել ուր հարկն է, որտեղից յանձնուած էր իրեն պաշտօնապէս, և ոչ էլ տպագրութեամբ լոյս աշխարհ հանել այն, ինչ որ ամենայն իրաւամբ պատկանում է ամենքին, ամբողջ հասարակութեանը: Առարկում է Պ. Զաքարեան թէ նա կարող էր աւելի ծանրակշիռ աշխատութիւններով զբաղուած լինել: Բայց միթէ օրին. Խալիպեան դպրոցի երկար-բարակ պատմութիւնը, հարիւրաւոր նամակների պատճէնով, կամ նոյն դպրոցի երկրորդ պատմութիւնը՝ աշխարհաբար և «պատմութեան» գրուած (անտիպ), կարծես «եղեսիոյ ողբը» լինէր, աւելի ծանրակշիռ և կարեւոր աշխատութիւններ են:

Խօսելով հայկական սղագրութեան վրայ, որ ինքն ըստ ինքեան ոչ մի կապ չէ կարող ունենալ Ներսիսեան Ծածկագրերի հետ, Պ. Զաքարեան աւելացնում է որ այդ աշխատութիւնն էլ Գաբրիէլ Եպիսկոպոսը ցոյց է տուել ձեմարանի այն ժամանակուայ աշակերտներին, որոնցից մի քանիսը սովորել էին այդ սղագրերով գրելու ուրեմն, հետեւցնում եմ ես, պիտի լինէին և այնպիսիք, թէ աշակերտներից և թէ ուսուցիչներից և մասնա-

Լանդ Սրբազանի քարտուղարներից, որոնք թէ ծածկագրերի բանալին և թէ 11 օրինակ ծածկագրերի վերծանութիւնը արտագրած և ընդօրինակած կլինէին: Այդպիսիների պարտքն է, եթէ իրաւամբ գտնուում են այդպիսի անձինք, երևան հանել իրենց մօտ գտնուած այս կամ այն ճանապարհով ձեռք բերած ընդօրինակութիւնները կամ բուն թարգմանութեանց բնագիրը և որ աւելի նշանաւոր է իմ աչքում, այն 11 օրին. ծածկագրերը, որոնք կորած են մեզ համար: Այդպիսով միայն՝ այս խնդիրը լուծուած կլինէր, թէ արդեօք Պ. Զաքարեան իրաւունք ունի առաջին գիւտը վերագրելու Ս. Այվազեանին, և թէ մենք ամենքս կծանօթանայինք այդ 11 նամակների պարունակութեան հետ:

Կեր. Մամբրէ Սրբազանը, որ 1880ին իբրև նախանդամ Կոնստանտնուպոլի գտնուում էր Թիֆլիսում և պաշտօնապէս ցուցակագրել է Հ. Այվազեանի բոլոր ձեռագիր աշխատութիւններն ու նամակներն, մեզ յայտնեց դրապէս, որ ոչ միայն չէ գտել որ և է ծածկագիր կամ վերծանութիւն, այլ և այդ մասին որ և է յիշուած բան: Իմ կողմից այս մասին հետազօտութիւնները շարունակուելու են:

« Ես շատ լաւ յիշում եմ, փոքր ինչ ներքեւում ասում է Պ. Զաքարեան, այդ նամակներից մէկը, որ ամբողջապէս տողուած էր Սրբազանի կապոյտ մատիտով, «բով նա գէշ էր է-ր կարդացած րոպէսը»: Այս կտորը Պ. Զաքարեանցի ամենալաւ յիշած մասն է, ուստի և մենք ամբողջապէս հաւատում ենք դրան: Այդ կապոյտ տողուած նամակը կարելի է և պէտք է ենթադրել, որ այն առաջին օրինակն է, որ Սրբազանի ձեռքն անցաւ 1859ին և որի վրայ աշխատելով գտաւ նա կամ ենթադրեց գտած լինել ծածկագրերի բանալին: Նա գծում էր իւր կարգացած տողերը, երևի ամբողջը չէր կարդում, որ կարգացուածները տողում էր, իսկ եթէ ամբողջն էր կարդացել և հետզհետէ ամբողջ նամակը տողեց, ուրեմն և 1866ին նա չպիտի դէմ առնէր միւս 10 օրինակի վերծանութեան առաջ: Ինչ վերաբերում է Պ. Զաքարեանի « ուղեղային գործունէութեան հոգեբանական քննարկութեան », մենք կխնդրէինք խոնարհաբար, որ այդ մասին մտածէ պարօնը, մեր յատկապէս մէջ բերած Պ. Մսերեանցի երկար ծանօթութիւնը կարգալիս և համեմատէ այդ իւր սլառմու-

ծի հետ: Այդ համեմատութեան մէջ շատ խրատական բաներ կարելի է գտնել: Հ. Այվազեան անշուշտ ինքը շատ լաւ գիտէր որ աստիճանն անգամ ոչ թէ 1866 թուին, այլ 1859 ին է եկել էջմիածին Երջանկայիշ. Մատթէոս Կաթողիկոսի և այժմեան Վեհափառի ուղեկցութեամբ, և այդպիսի սխալ բան չէր պատմիլ: Իսկ թուականները այս խնդրում հերքելու և ապացուցանելու գլխաւոր և միակ փաստերն են, քանի որ աւելի դրական ապացոյց չկայ մէջ տեղում: Պ. Զաքարեան շատ լաւ է յիշում և նոյնպէս պարզաբար գործածում այդ թուականները: Մենք չենք ուզում շատ հեռու գնալ, նկատենք և մի ուրիշ կէտ:

Պ. Զաքարեան յիշում է որ Հանգ. Այվազեան ծածկագրերի բանալին փնտռելիս, որոնել է նախ և առաջ «կամ» և «և» շաղկապները և գտնում է մեծ նմանութիւն իմ և Սրբազանի գործ դրած սիստեմի մէջ: Զարմանալի չէր լինիլ եթէ նոյն հետեանքին երկուսս էլ նման կամ միևնոյն ճանապարհով հասած լինէինք: Եւ եթէ Հ. Այվազեանի գործ դրած ձեւը կամ սիստեմը նոյնը լինէր ինչ որ իմս, անշուշտ նա պիտի հասնէր դրական հետեանքի և հակադարձաբար, եթէ ես նորա նման որոնէի «կամ» և «և» շաղկապը, անշուշտ հետեանքի չէի հասնելու: Հանգուցեալ Այվազեան որոնում է եղև բառեր\*, իսկ ես—գրեք: Ահա մեր սիստեմների գլխաւոր տարբերութիւնը: Զինացիք ամեն մի բառի համար մի առանձին նշան ունին, մեք ամեն մի բառի համար: Զինացիք ստիպուած են տասնեակ հարկներով նշաններ գործածել իրենց բառերը գրելու համար, մինչդեռ մեզ բաւականնում է 38 գիր: Ես էլ, Հանգուցեալ Այվազեանն էլ՝ առանձին պատահած մի գիրը ենթադրել ենք «և» կամ «է»: Այդ մի շատ պարզ ենթադրութիւն է, որով և հեռու չէ կարելի գնալ և սորանով էլ վերջանում է մեր աշխատութեան մէջ եղած ՄԻԱԿ նմանութիւնը: Իմ գլխաւոր յենակէտն եղել են այբ, վո և նու գրերը: Եւ այդ էլ յայտնի պատճառով, և ոչ թէ կամայաբար կամ պատահաբար: Այդ գրերը, մանաւանդ այբը ամենաշատ գործածականն է մեր լեզուի մէջ: Յունուարի «Արարատում» մեր մէջ բերած 11 տող ծածկագրում, որ պարունակում է 234 գիր, հե-

\* «է», բայր, «և» շաղկապը, «կամ», շաղկապը:

տեւել քանակութեամբ են հանդիպում այբբենի գրերը. 34 ա, 18 ո, 16 ր, 14 ն, 14 ի, 14 ս, 13 կ, 12 լ, 11 մ, 10 ե, 9 յ, 9 տ, 9 ց, 6 գ, 6 լ, 4 բ, 4 է, 4 ղ, 3 գ, 3 ը, 3 չ, 3 ք, 3 լ, 2 հ, 2 պ, 2 վ, 1 զ, 1 Ժ, 1 խ, 1 ճ, 1 ջ, 1 ու, իսկ թ, ծ, ձ, շ, փ, օ, ֆ գրերն ամենեին չեն պատահում: Այս փոքրիկ 11 տողեան հատուածից արդէն երևում է մեր սիստեմի առաւելութիւնը—մեր ենթագրած գրերից երկուսը՝ ա և ո, առաջին տեղն են բռնում, իսկ նուն—չորրորդը: Եթէ աւելի մեծ հատուած ընտրել, հաւանական է մեր կարծիքով, որ նուն ոչ թէ չորրորդ այլ երրորդ տեղը բռնէ և յետագաներից բոլորովին զատուի:

Այսպիսի մի հիմնաւոր յենակէտ ունենալուց յետոյ, « իսկ և իսկ » բառը իւր յարակէ և սրաշակէ կազմութեամբ պարահաբար մեր այբին ընկաւ և հեշտացրեց կամ լաւ ևս արագացրեց խնդրի լուծումը, որ առանց այդ էլ կատարուելու էր: Այս էլ ասած, որ եթէ մենք այբը նախապէս որոշած չլինէինք, « իսկ և իսկն » էլ մեզ դիւրացնելու չէր խնդրի լուծումը, այլ աւելի խճճելու, որովհետեւ մենք այդ բառը կարդալու էինք « այլ և այլ » կամ « շատ և շատ », որով աւելի ևս հեռանալու էինք ու մոլորուելու:

Այս բոլորից ակներև հետեւում է որ Հ. Այվազեանի « կամ »ը և այդ բառի մէջ գտնուած այբն ու կենը, մեր հիմնական այբի և « իսկ և իսկի » կենի հետ միայն արտաքին նմանութիւն ունին, բայց ոչ ներքին կամ իսկական: Հ. Այվազեան մի եռագիր բառ, օրին. « ըստը » համարելու էր « կամ » և սէն կղաւնար նորա այբը, առանց որեւէ հիմունքի, որով և « սաստիկ » բառը նա կարդալու էր « առաւել » կամ « ասացին » կամ մի ուրիշ բան, անվերջ կերպով փոփոխուող: Այսպիսով կընկնէր յոռի շրջանի ( cercle vicieux ) մէջ և ոչ թէ 20, այլ 40 տարուայ մէջ էլ չպիտի կարողանար ճշմարտութեան հասնել: Այս դժուարութիւնն էլ կայ, որ քառեք որոնելը գրեթէ անկարելիութեան է հանդիպում, քանի որ ծածկագրեալ թերթերի մէջ սակաւ բառեր որոշակի անջատուած են միմեանցից, մինչդեռ մեծ մասամբ հնարաւորութիւն չկայ իմանալու թէ մի բառ որտեղ է սկսուում և ուր վերջանում: ( Տես յուն. ծածկագիրը ):

Ուստի և գալիս ենք այն հետեւանքին, որ եթէ Հ. Այվա-

զեան իսկապէս գտել է մեզնից առաջ Ներս. ծածկագրերի բանալին, նա այդ չէր կարող «կամ» ով գտած լինել, այլ պէտք է ունենար ուրիշ յե՛նակէտ կամ միջոց: Մեր վերծանած երկու օրինակ ծածկագրի մէջ կայ 573 բառ, բացի նախդիրներէն, և այդքանի մէջ կայ յայն յայն «կամ», այն էլ բազրի բերմունքով սխալ է գրուած—կափ փոխանակ կամի: (Ռէթէոսի նամակ, ներքեւից տող 10ր):

Այսչափով բաւականանալով, Պ. Զաքարեանցի և սոյն խընդրով հետաքրքրուող ընթերցողների լուրջ ուշադրութիւնն եմ հրաւիրում ասածներիս վրայ, Մեր բոլոր ասածը հիմնուում է մինչև այժմս յայտնի եղած փաստերի վրայ, իսկ թէ այսուհետև կարող են նոր փաստեր և դրական ապացոյցներ երևան գալ, մեր ասածը հերքող կամ հաստատող, այդ մասին երաշխաւոր չենք: Մենք վերջնական վճիռ չենք տալիս, և լաւ կլինէր որ վերջնական վճիռ կտրողները՝ իրանց ասածը դրական ապացոյցների վրայ հիմնէին:

ՄԻԱՐԱՆ

## Մ Ի Լ Տ Ո Ն

ԵՒ ՆՈՐԱ

«ԿՈՐՈՒԾՍ ԳՐԱԽՏԻ»

(Ըստ Տէնի)

(Շարունակութիւն)

Այլ նորա մաքառութեան համար ստեղծեցին նորան: Եւ իրաւ, հէնց որ Միլտոնը Անգլիա վերադարձաւ՝ իսկոյն այդ մաքառութեան մէջ մտաւ զինուած՝ արամբանութեամբ, կրթութեամբ և զպայքամբ, ամրապատած՝ համոզման և խղճի զրահներով: «Հէնց որ թոյլ տրուեցաւ դէթ խօսքի ազատութիւն, ասում է նա, իսկոյն բոլորի բերանները բացուեցան եպիսկոպոսականութեան դէմ . . . Թէպէտ այն ժամանակ զբաղուած էի այլ խընդիրների խորհրդածութիւններով, սակայն վճռեցի այս կողմը դարձնել մրաքիս բոլոր զօրութիւնն ու գործունէութիւնը . . . վասն զի ի մանկութենէ պատրաստուել էի տգէտ չմտալ նախ և առաջ աստուածային և մարդկային օրինաց խնդիրներում»: Սորանից յետոյ իսկոյն գրեց (1641) Անգլիայի Նոր-խրոնութեան Ժողով, որ խոստաբար և արհամարհանք ծաղրում և հերքում